

Արձանագրություն թիվ 1

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ օգոստոսի 29-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-22 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում:

2. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղուչիկյան.

-Հարգելի գործընկերներ բոլորիդ ուղարկված էր գիտխորհրդի աշխատանքային օրակարգը: Ի՞նչ առաջարկներ ունեք և ի՞նչ փոփոխություններ: Ուղղված տարբերակը կտեղադրենք արձանագրության մեջ և կուղարկենք Ձեզ:

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2022-23 ուսումնական տարվա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Մեպտեմբեր

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Հոկտեմբեր

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

3. Ծրագրերի ղեկավարների հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին:
2. Հաղորդում դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:
3. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Հունվար

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Փետրվար

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:
4. Ընթացիկ հարցեր:

Մարտ

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

1. Ֆակուլտետի ՈւԽ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2022-23 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

3. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Մայիս

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2022-23 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Հունիս

1. Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2022-23 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
3. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
4. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
5. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Քննարկված և հաստատված է քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2022թ. օգոստոսի 29-ին կայացած նիստում՝ արձանագրություն թիվ 1

2. Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան,- Ընթացիկ հարցերը բաժնում ունենք մի քանի հարց

1. Ֆակուլտետի գիտական խորհուրդ է դիմել Օրգանական քիմիայի ամբիոնը՝ նույն ամբիոնի դոցենտ Ա.Ս.Գալստյանին ասպիրանտի ղեկավարի երաշխավորություն ստանալու համար:

Լսեցին – Օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ Բ.00.03 «Օրգանական քիմիա» մասնագիտական դասիչով թեկածուական ատենախոսություն ղեկավարելու հարցը: Ա.Ս.Գալստյանը ունի համապատասխան ոլորտի համար անհրաժեշտ գիտական հոդվածներ, արտոնագրեր: Հարցը քննարկվել է ամբիոնում և ստացել է դրական արձագանք:

Որոշեցին - Հաշվի առնելով Ա.Ս.Գալստյանի մանկավարժական և մասնագիտական գործունեությունը, քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը (միաձայն քվեարկության արդյունքում) որոշեց երաշխավորել դոցենտ Ա.Ս.Գալստյանին Բ.00.03 Օրգանական

քիմիա մասնագիտական դասիչով թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը: Խնդրել ԵՊՀ Գիտական խորհրդին հետագա ընթացք տալու համար:

2. Ֆակուլտետի գիտական խորհուրդ է դիմել անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնը`

Լսեցին. -ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի «Վայրի աճող բուսատեսակների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում, կենսաակտիվ միացությունների անջատում և արտադրական տարբեր բնագավառներում կիրառման հնարավորության ուսումնասիրում» թեմայով «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2022» ՄՐՑՈՒՅԹԻ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորում ստանալու համար հայտը, թեմայի ղեկավար` դեղագործական գիտությունների թեկնածու Հ.Պետրոսյան:

Գիտական խորհուրդը`

Երաշխավորում է թեմայի ֆինանսավորումը

Չի երաշխավորում թեմայի ֆինանսավորումը

3. -Խորհրդի նախագահ, ք.գ.դ., պրոֆեսոր Տ.Վ. Ղոչիկյանը նշեց, որ Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդին է դիմել ՕԴՔԳՏ կենտրոնի ավագ գիտաշխատող ք.գ.թ., Անուշ Հովակիմյանը` ՀՀ ԳԱԱ, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության կողմից երիտասարդ գիտնականների համար հայտարարված “Լավագույն գիտական աշխատանք” մրցույթին մասնակցելու համար: Անուշ Հովակիմյանը Քիմիայի ֆակուլտետի գերազանց առաջադիմությամբ շրջանավարտ է, գիտական գործունեությունը շարունակել է ՆՕՔԻ-ում: Ա.Հովակիմյանը 2013թ-ին շահել է “Լավագույն գիտական աշխատանք” առաջին մրցանակ, ընդգրկվել է “Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող” մրցույթի հաղթողների շարքում, իսկ 2018-ին ստացել է ՀՀ նախագահի մրցանակ: Նրա գիտական աշխատանքները հրատարակված են բարձր ազդեցությամբ գործակցով ամսագրերում:

Որոշեցին – Հաշվի առնելով գիտխորհրդի դրական կարծիքը և հայցողի գիտական աշխատանքները, խորհուրդը միաձայն որոշեց ՕՂՔԳՏ կենտրոնի ավագ գիտաշխատող, ք.գ.թ. Ա.Հովակիմյանին երաշխավորել մասնակցելու ՀՀ ԳԱԱ, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության կողմից երիտասարդ գիտնականների համար հայտարարված “Լավագույն գիտական աշխատանք” մրցույթին:

4. Տ.Վ.Ղուչիկյան,- Իր կատարած աշխատանքների տարեկան հաշվետվությունն է ներկայացրել ՈւԳԸ նախագահ Արտյոմ Պետրոսյանը:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատեց ՈւԳԸ նախագահ Արտյոմ Պետրոսյանի հաշվետվությունը:

Նիստի նախագահ,

պրոֆեսոր

Նիստի քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղուչիկյան

Մ.Ա.Սամվելյան